

ԲԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԱՊՐԻԼԻ ԹԻԻ
 ուղարկող համար
 Տարեկան 12 ռ.
 Վեց անգամ 6 »
 Մասնական համար Տարեկան 15 »
 Վեց անգամ 8 »
 Անկախ համար
 Տարեկան 3 ռ. 50 կ.
 Վեց անգամ 1.50 »
 Այլ թիվ չկա
 Կապիտալի համար 40 անգամ
 Կ. իսկ վերջին համարի համար 20 անգամ
 Կ. իսկ վերջին համարի համար 20 անգամ
 20 Օլո գեղը կրկնայ

ՇԱՐՇՈՒՄ

Պատկերի և դրամի դրվի
 Կրկնգրություն հասցիին
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varua (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Պարզարկող համար ձեռքի
 (Գ Ի Ն. 15 Ս Ա Ն. Թ Ի Մ)

Արտատպանի համար ձեռքի
 (Գ Ի Ն. 20 Ս Ա Ն. Թ Ի Մ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

ՆԵՐԿԱՅԻ ՀԵՂԻ-ՆԱԿԱՒՈՐՆԵՐԸ

Ունեւ ժողովրդի մէջ անհատի հեղինակութիւնը հասարակական տեսակէտով համապատասխանում է նոյն ժողովրդի ժամանակակից մտաւոր և բարոյական բարձրութեան ու կենսական պահանջներին: Յառաջադիմող ժողովրդի մտաւոր և բարոյական բարձրութիւնը ու կենսական պահանջները անընդհատ փոխվում, հետագայէն բարձրանում և լայնանում են, ուստի փոփոխվում են և ժողովրդական հեղինակուոր անձնավորութիւնները: Ինչպէս որ ժողովրդի հին և նոր սերնդի մէջ գաղափարի և բարոյական պահանջների մէջ ահագին տարբերութիւն է լինում, նոյնպէս և ժողովրդական հին ու նոր հեղինակաւոր անձնավորութիւնների մէջ: Ուստի սերնդների աչքում դարբերով հեղինակաւոր լինելու համար հարկաւոր է գերմարդկային բարեմասնութիւններով օժտված հանճար լինել, իսկ այդ տեսակ հանճարներ ամբողջ մարդկութիւնը իր երկարատեւ գոյութեան մէջ հաջիւմի երկու հատ է ծնել: Այս բոլորից յետոյ դիւրին է եղբակացնել որ ամեն ժողովուրդ և ամեն պատմական շրջան իրենց յատուկ հեղինակաւոր անձնավորութիւնները ունեն. ուրիշ կերպ չէր կարող լինել, որովհետեւ ամեն մի հեղինակաւոր անհատ ծնունդ է իր ժողովրդի կենսական պայմանների: Ուստի որչափ մի ժողովուրդ մտաւոր և բարոյական ստոր աստիճանի վրա է գտնվում, և կենսական շատ սակաւ պահանջներ ունի, այն չափով էլ նրա մէջ հեղինակութիւն ձեռք բերելու համար սակաւ ձիւրքեր և ընդունակութիւններ են հարկաւոր անհատի համար:

Բրտերի մէջ հեղինակաւոր լինելու համար պէտք է քաջ աւազակ լինել, իսկ Եւրոպայի մէջ Բուսսո կամ Մարքս և գրանց նմաններ, բայց եւրոպացիին էլ

մի ժամանակ այնպիսի մի վիճակում էր, որ քաջ աւազակին իրր հեղինակաւոր անձ էր ընդունում:

Խօսքերս մասնաւոր են, հայերս որոշ չափով յառաջադիմող ժողովուրդ են, վերջին հարիւր տարվայ մէջ, նոյնիսկ 20—50 տարվայ մէջ մեր կեանքը իր բոլոր կողմերով ահագին փոփոխութեան է ենթարկվել: Այսօր մենք մտաւոր ու բարոյական այնպիսի մի աստիճանի ենք հասել և կենսական այնպիսի պահանջներ ունենք, որ 50—100 տարի առաջ մեր պայտերին բոլորովին անձանօթ էին: Բոլորովին է մեր կեանքը, փոխվել են մեր պահանջները, փոխվել են մեր իդէալները, ուստի փոխվել են և մեր հեղինակաւոր անձերը:

Գիտենք թէ մի յիսուն տարի առաջ մեր ժողովրդական կեանքի մէջ ամենահեղինակաւոր, ժողովրդի բախտը իրենց ձեռքում բռնողները կղերականութիւնը և ամիրանները էին: Իսկ անարգվածները մտքի մարդիկ Բարձր կղերականութիւնը թաղված էր ոսկու և մետաքսի մէջ, որ ձեռք էր բերում ժողովրդի դրամով, իսկ ժողովրդի մտքի աշխատաւորները անօթի ծարաւ մեռնում էին կամ թէ իրենց խղճը դնում ամիրանների և կղերականութեան ստրի տակ, որպէս զի կարողանան զոնէ գրանց շնորհի պէտապրել: Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետեւ այն ժամանակ հայ ժողովուրդը միմիայն երկու իդէալ ունէր: մէկ այս աշխարհում դրամ ունենալ, ինչ միջոցով էր որ լինէր, մէկ էլ միւս աշխարհ գնալ իր մեղքերին թողութիւն ստացած:

Հեղինակաւորները միմիայն դրամի, ուժի մարդիկն էին և Աստու «պսեղո» փոխանորդ կղերականութիւնը:

Անցան տարիներ, արհամարված հայ մտքի աշխատաւորները իրենց անխնայ աշխատանքով փորփորեցին հայ կեանքի «հին» հեղինակաւոր սիւնների տակը, ժողովրդին խեղդող ու ճզմող ամիրան

յականութիւնը և կղերը ընկան իրենց հեղինակաւոր բարձրութիւնից և տեղի տւին ուրիշ «հեղինակաւորներին», փոքր ի շատեւալատ և հարուստ միտք ունեցող հայ անհատներին: Նրանց՝ որոնք զգում էին թէ ժողովուրդը յիսել է աւելի լայն, մտաւոր և բարոյական պահանջներ զգալ ու աշխատելով բաւականութիւն տալ այդ պահանջներին:

Սահմանադրութիւն, նոր գրականութիւն, բոլորը այդ նոր հեղինակաւորների աշխատութեան արդիւնքն են: Ժողովուրդը ձանձրացել էր կղերի անմիտ և անհասկանալի քարոզներից, ձանձրացել էր աղէտ, կոշտ ու կոպիտ և կամայական ամիրաններից, նա աւելի լայն կեանք էր փնտռում, աւելի մեծ թոռիք էր ուղում գործել, և սիրով հետեւեց այդ նոր «հեղինակաւորներին», առաջ գնաց նրանց գծած ճամբով:

Բայց այդ ժամանակին էլ անցաւ: յառաջադէմ մտքի հեղինակաւորների դիմաց դուրս եկան գործի մարդիկ—իսկական խղճը չընդողոր—տաճկական լուծը թօթափել աշխատող մարդիկը՝ ապստամբ հայ յեղափոխականները: ու սրանց առջեւ այլեւս կարեւորութիւն չուէին ոչ ամիրայական, ոչ կղերական և ոչ գրական հեղինակաւոր անհատները: Սրանք չեկան գրականութիւնը մշակելու: լուսին և աստղերը գովելու: սրանք չեկան բարեգործական, դպրոցական հաստատութիւնների համար խրատուսիչ երկար ու ձիգ յօդուածներ գրելու: չեկան և պատրիարքներին ու կաթողիկոսների գործունէութիւններով զբաղվելու: Սրանք եկան ճիգեր թափելու բռնի ուժով, արեան գնով հայ ժողովրդի ոտքն ու ձեռքը կաշկանդող բռնակալական շղթան ջախջախելու՝ որովհետեւ հաստատա համոզված են թէ առանց այդ շղթաների խորտակման հայ զպրոց, գրականութիւն, սահմանադրութիւն զէրօյի նշանակաւոր գոյութիւն: Այդպէսով, ներկայ ժողովրդի կենսական պահանջները և ներկայ հայ կեանքի պայմանները գործնական ապստամբութիւն են պահանջում: ուստի, ժամանակի հեղինակաւոր մարդիկ միմիայն ապրստամբները են: հոգևով, որով, մտքով, գործով և էութեամբ մաքուր ապստամբները: Ու ամեն մի հին հեղինակութիւն, որչափ էլ որ նա բարձր լինէր մի ժամանակ, պէտք է խոնարհի հայ կեանքին որ «հեղինակաւորներին» առջեւ:

Եւ այս ճշմարտութիւնը պէտք է լաւ գիտնայ թէ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը և թէ Արփիարի համար վերաբննիչ տեսան ստեղծել ուղղող հոշակաւոր և տիրահոշակ պարոնները:

Հանջների համապատասխան հեղինակաւոր անգամները միմիայն հայ յեղափոխականները դարձան, գործնական յեղափոխականները: Եւ հիմա մեր յեղափոխական շրջանի մէջ ոչ գեղեցկասէր գրողէտ, ոչ խրօնիկիօր հրապարակախօս, ոչ կաթողիկոս և ոչ պատրիարք, ոչ տիպոգրաֆներ յեղափոխական տեսակէտով հեղինակութիւն չեն կարող լինել հայ գործնական յեղափոխական տարրի համար: մանաւանդ եթէ գրանք ճգնում են գաւաճաններ արգարացնել, Սուրբութանի հետ հաշտութիւն քարոզել:

Ժամանակը և ներկայ հայ կեանքի պայմանները գործնական ապստամբութիւն են պահանջում: ուստի, ժամանակի հեղինակաւոր մարդիկ միմիայն ապրստամբները են: հոգևով, որով, մտքով, գործով և էութեամբ մաքուր ապստամբները: Ու ամեն մի հին հեղինակութիւն, որչափ էլ որ նա բարձր լինէր մի ժամանակ, պէտք է խոնարհի հայ կեանքին որ «հեղինակաւորներին» առջեւ:

Եւ այս ճշմարտութիւնը պէտք է լաւ գիտնայ թէ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը և թէ Արփիարի համար վերաբննիչ տեսան ստեղծել ուղղող հոշակաւոր և տիրահոշակ պարոնները:

ՎԱՐՊՈ

ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ
 ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՅԷՆ
 Երզնկայէն ստացուած նամակէ մը հետեւեալը ընդօրինակելով կը զրկեմ Շարժումի:

ԵՐԶՆԿԱ. 15 Մարտ

«... Կոտորածէն ի վեր Երզնկայի առեւտրական հրապարակը սկսաւ տագնապիլ: Չեր մեկնած տարին գործերը խիստ լաւ էին բազմապատմաբ ներկային: Վաճառականներ ու խանութպաններ առատաւոր կերթան շուկայ և առանց առեւտուր ընելու կը վերադառնան շատ անգամ: Արհեստաւորներու ձեռքերը ծոցերնին

մնացած է . գործադուլի կատարեալ շրջանի մը մէջ կը գտնուի շուկան : Ամէն օր , ամէն ժամ , որ կողմ որ դառնաք հացի խնդիրն է որ կը ծեծուի : Տաղնապը ընդհանուր է . ամենէն ծանր հարուածը սակայն գիւղացին կը կրէ , որովհետեւ քաղաքիս միջին գասակարգին . մասնաւորապէս աղքատին հաց հայթայթող երկու գլխաւոր արհեստները « մանիսայագործութիւն » և « եղաճարութիւն » ոչնչացած են գրեթէ : « Մանիսագործ » 100 արհեստաւորներէ հազիւ 10 հասը « մշտութիւն » կը շինեն , այն եւս տասնի փոխարէն միայն մէկ մշտութիւն ըլլալու պայմանով . գործքինի 1 1/4 դահեկանը 20 կամ 30 փարայի իջեցուցին : Աղքատներու թիւը բազմապատկուած է . որոնց վրայ կուգան բարդուիլ շրջակայ գաւառներու և գիւղերու աղքատներն ալ : Ասոնք խումբ խումբ իրենց ընտանիքով , գաւառներով լերկ ու մերկ վիճակի մէջ , դռնէ գաւառ կիցնան կտոր մը հաց և պատսպարան մը խնդրելու , գէթ գիշերները արտաքին կամ մտորի մէջ կը կուտան համար : Որ կողմ որ դառնաս , ուր որ երթաս ամէն քայլով տեսիլ աղքատներու կը հանդիպիս : Այս մտորացիկները համետ գործաւորներ են , որոնք հացին հետ գործ կը խնդրեն օրական 5—6 հատ հաց ճարելու . և սովամահ չըլլալու յուսով : Սակայն ներքինները գործ չեն կարող գտնել , ո՞ր մնաց արտաքինները , բնականաբար այս պարագային , աղքատները միակ յոյսերնին գրած են շուկա . առաջնորդարանին վրայ , որուն դրան առջեւ , ներսն ու դուրսը , պատերուն տակ կարգաւ շարուած կամ պառկած են չուտած . բոլորը բազմին ձեռքը խաղալիք դարձած խեղճ արարածներ , յիմար և վայրենի կուտավարութեան մը զոհերը

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

Մ Շ Ո Յ Ա Շ Ի Ա Ր Զ Ի Ա Ն Թ Բ Ե Ր ,
Պ Ա Տ Ե Ր Ո Ջ Մ Է Ն Յ Ե Տ Ո Յ , Ո Ւ
Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ո Ւ Թ Ե Ա Ն Ի Մ Ա Տ Ո Ւ Մ

1879 թուականին , կնուս գաւառէն կողմանուկ գիւղացի կնոջն և և Մկերտի , զարդակաւ արձակուրդ ստանալով , իրենց տունը վերագարձան , ազգային սպորտ կրթութեամբ , այդ վեճ ուխտին հաւատարմութեամբ սկզբունքն չի գաւառանելու համար , զոհելով ամէն ինչ . ժողովրդեան ամէն խաւերու մէջ սպորտի սկսան , կարճ ժամանակամիջոցի մը մէջ իրենց խոհանուր և ծանրաբարոյ վարքով ու բարքով մեծ ժողովրդականութիւն չահեցան և միանգամայն լաւ մը ուսումնասիրեցին ժողովուրդի այն

Առաջնորդին ջանքերը , աղքատախնամին արկը անջօր կը գտնուին զանոնք սիրովելու , և թէ ոչ լիովին , գէթ մասնաւոր կերպով . ահա այս պատճառով յուսահատ գրութեան մէջ են ամէնքը :

Քաղաքիս հայերուն , և ամբողջ գաւառներու նիւթական ու բարոյական այս տառապալից և անտանելի վիճակին մէջ է որ , կառավարական գաւառ հարստահարիչներ , կարծես զազանութիւններուն արգելքը եղող այդ խեղճութիւնները քիչ սեպելով , ոտականներով մէկ տեղ կը ներկայանան ասոր անոր , կը ծեծեն կը հայհոյեն , կը բանտարկեն և . . . խտուր ու բար կը պահանջեն , առանց երբէք լսելու աղքատիկ անհատներու սղիքարկու խնդրանքներուն , որոնք մէկը միւսին ետեւէ այդ անպիտաններուն ստքը կիցնան և կառավարութեան (. . .) գթութիւնը կը հայցեն : Ահա ասանկ կը գործադրէ մեր օգոստոսիար վեհապետը (. . .) իր շնորհները Գործերու այս ընդհանուր ամբարձրան հետ , զոյց են նաեւ պանդխտութեան դռները հայերուն առջեւ . ամէն անհատ զատապարտուած է իր տեղը կաշկանդուած մնալու , այդ տառապանքներուն մէջ սապկուելու , արցունքի մէջ լողալու և նիւթութեան ու անօթութեան մէջ շարժարուելու :

Հիմա այս սուգերը գրած տաննըս կը մատնեմ թէ ասկէ 4—5 տարի առաջ մեր ջոջ-աղաները , մատնիչները և հակափոփոխական տարրը կը մեղադրէին յիշատակահանները , իբր թըշուառութիւններու պատճառ . այսօր հոս վերջին ծայր զգուշութեամբ և լուռ ու մունջ կը գործեն մեր յիշատակահանները , ինչպէս առաջ , հիմա ինչո՞ւ արդեօք այն օրերէն տեսիլ թըշուառութիւնը տարածուած է .

իրօք յիշատակահաններուն է յանցանքը , թէ այս անպիտան կառավարութեան և քծնող շուկան , որոնք նեղ պարագաներուն մէջ ամէն ստորութիւն յանձն առին մինչդեռ , առանց իրենց , կառավարութիւնը կը ակնածէր յիշատակահան մարմինէն : Սիրելի ընկեր , բոնութեան գէթ բռնութիւն պէտք է , այս է աշխարհի օրէնքը , և ասոր ժողովուրդին մեծամասնութիւնը մեծ հաւատք կը ընծայէ ու կը աշխատի հացին հետ զէնք ալ ճարելու միջոցները մտածել , որուն անհրաժեշտ պէտք ունի : Աւարտալի է որ այսօր 10 տարեկան աղան ալ զէնք կը պաշտէ , և իր ձեռքը անցած 40 փարայով կաշխատի գոնէ ժանգոտած ւանայ մը ձեռք անցնել : Արտասահմանի մէջ ի՞նչպէս կերթայ յիշատակահան գործը , և ի՞նչ կարծիքներ կը տիրէ

Խմբագիր , եթէ կարելի ըլլայ պատասխանել նամակիս հեղինակին վերջին տողերուն , և մանրամասնօրէն պարզուի մեր հակափոփոխականներուն կիզոտութիւնները , ազգաբնակչուս ուղղութիւնները , արդեօք ի՞նչ կը յուսաք թէ մտածէ արտասահմանի յիշատակահաններուն վրայ : Ասկից անցանք , այն նամակին հրատարակուելէն վերջ , մեր թափփոկ շարժումները թերեւս խմբագրական մը եւս գրեն թէ « Կարգօն » չինձու նամակներ կը հրատարակէ և զէնքի անունով գրած կը հաւաքէ , որպէսզի ուտէ (. . .) . մինչև ու՞ր պիտի հասնի արդեօք մեր գիւմակաւորներուն ստորնութիւնները : Ժողովրդին այդ կեղծ պաշտպանները , կոկորդիլոսի արցունք թափողները , և անոր բուն ներքին թշնամիները , ուրիշ նպատակ չունին , — յիշատակութիւնը տապալել , և իրենց աղտոտ գոյութիւնը պաշտպանել :

ահա արտասահմանի մամուլին մէկ կարեւոր մասին խախալը և անոր միտքակոյաններուն վրայ նստիլ ու որդնոտած բուերու պէս մամուլ . ահա և կարգ մը խմբագիրներու բարոյական մակարդակը . ամօթ . եւ զարմանալին ուր է գիւտք . այն թափփոկութիւնները , որ կոկորդիլոսի պատեւելու աստիճան կը պուան , կը « ճղին » գործուած զեղծութիւնները այս կամ այն անմեղներուն վրայ նստել , այդ թափփոկութիւնները , սիրով կը հրատարակեն բուն խաչագողներուն խոռոտիողական գրերը , կաշխատին զանոնք արգաբացնել որպէս զի յաջողին իրենց հակափոփոխականներուն վրայ ձգել . միմտակահան ջանք . գոնէ համբարութիւն ըսածն ալ չունին որ սպասեն ու տեսնեն թէ ո՞վ է յանցաւորը :

Բ Ա Ջ Է
Ֆ ի լ ի պ է , 30 Մարտ

Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Ո Ր Բ Ե Ր Ը

Կոտորածներէն ի վեր մարդկութեան լաւագոյն մասը չը ցնցուցաւ այնպիսի խնդրէ մը որքան որ որբերու չուտու և խեղճ վիճակէն : Բնականապէս սխալմով կոտորուող սուս ժողովուրդն այ իր մասնաւոր նուիրատուութիւններով հրապարակ եկաւ քառական թուով որբեր պահելու : Եւ րոպացի պանիւղի մը որբեր խնամելու համար ընկերութիւններ կազմեցին եւ պէտք եղած օգնութիւններ կը շարունակեն : Բայց հայերս որ աւելի պարտական էինք մեր որբիկներու ապագային հանդէպ , մինչև ցարդ ինչ ըրինք . քանի որբերսամ ընկերութիւններ կազմեցինք . եւ քանի խեղճեր կը պահենք . չէ որ մենք որբիկներէն աւելի գիտակից ենք Մայր Հայրենիքի մէջ տանջուող մեր եղբայրներու վիճակին . կարծեմ ամէն հայու յայտնի է որ մեր որբերէն և որբուհիներէն շատերը թըրքական հարկմեներու մէջ հարկմական ծառայութիւններու համար կը տարուին և շատ հաւանական է որ կրօ-

գալմագամութիւն ընելով , իր գաղանութեամբ տիրապետած էր վրանին , թէ և առաջուրէն շատ փորձեր եղած էին ժողովրդեան կողմէն այդ բարբարոս գաղանը տապալելու , բայց ինչ օգուտ որ նշանակութիւն չէր ունեցած . և վայրկեանային այդ արգար կողմերու և կանչուողաւորներու ձայներ կը խեղճուէին , շնորհիւ իր որդի Պահրի փաշայի . որ Պօլիս Սուլթանին ամենէն աւելի սիրելի թիկնապահներէն մէկն էր . և Գալաթա-Սարայի միւթէտարիք :

Անցեալի մէջ եղած անյայտուութիւնները զէրօյի չափ նշանակութիւն չունեցան երկու քայլերի երկուստարկներուն համար , քաջ ամէն տեսակ միջոցներով զինուած , անցան սուլուրէզ կոտորու այդ գաղանի հետ , միեւնոյն ժամանակ ալ , ժողովրդեան պորձնապէս ցոյց տալով և սովորեցնելով թէ կոտորու ընդ միշտ կը ունիլ պէտք է . բուն նպատակին հասնելու համար և . այսպէսով նախ մահաբազուութիւն մը կը պատրաստեն Պատրիարքարանի համար . ասոր զեղ-

ծուկներն մէջը թուելով , և միանգամայն ցոյց տալով թէ ժողովրդեան վրայ գործուած ճնշումներն ու հարստահարութիւններն ուրիշ մտաւոր կառնուր , և ուր կը յանգին , միմիակ այդ անտանելի ցաւոց գարմանը Պատրիարքարանէն խնդրելով :

Պէշք կրակ կտրած այդ երկու երիտասարդներու գէթ , իր անխիղճ գաղանութեամբ բողբոլին մէջ աւելին շնչելու անմիջական միջոցներու մասին կը խորհէր , ինչպէս որ շատ անգամներ ալ իր հակառակորդներուն վերջնական համար . թըրքական կեղծ բողբոլիքայով մը առ երես բարեկամ մանուրով , քանի մը փարայի թոյնով ամէն հալուեր կը մարտը . նոյն եւս կուղէր ստոնց ալ ընել . ըստ այնմ միջնորդներ մէջ ձգելով , իր բարեկամանալու փափաքներն կը յայտնէր , որպէս զի իր վրէժառութեան ծառան գոնէ այդպիսի ստոր միջոցով մը թըրքական համար և . կողմէն , ժողովրդական ուժը երկու երիտասարդներու կողմ ըլլալով , փոխանակ այդ գաղանի գործած բարբարոսութիւնը

նախորդ ալ կրլան : Մայր Հայրենիքի մէջ ապրող մեր եզրայրները անկարող են իրենց այդ սրբերու պէտքերուն գոհացում տալ . եւ այդ պարտականութիւնը կը մնայ արասա՛սմանի մէջ ազատ գործունէութեան ասպարէզ ունեցող հայ երիտասարդութեան :

Միութեամբ կը ըսել թէ այս կիրակի Վատնայի մէջ Որբախնամ բնկերութիւն կազմուած է եւ կը յուսանք որ այս օրինակին պիտի հետեւին արասա՛սմանի ուրիշ հայաբնակ քաղաքներն ալ :

Յ. Ա.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՐԱՆԻՒՆԷՆԷՐ 27 Մարտ

Անցեալ օրուան գրած նամակովս չիցած էի պերճան փառային հոս պալլու որուն ասկէ երթալն ի վեր գրեթէ ընդհանուր բերդերն պատրաստ վիճակի մէջ են . գիշերներն ելեկտրական լոյսով նշանաճառութեան փորձեր կը կատարուին . պիշիք եւ ցիւրեկները ցէն թնջուց մը անգամ Եօլիս չեն թողոր որ անցնին . ոչ թէ կեանքը բերու «գրահաւորք» . Տարտանելն Սպանիոյ Սանթիակոյ քաղաքին պիտի վերածուի բոլորով մեկ վախճանի կուզեն :

Անցեալ շաբթ օրը . քաղաքի քահանան եկեղեցեայ . բոհը կը պալլուի եզր տկար վիճակի մը մէջ . տաճիկ սօքթօրը սպասելով . Տօքթօրը կուգայ եւ ճիշդ քննութեան ասան մէջ մըն ալ կը նային որ զօրք մը եկեղեցեային սենեակը մտեր է ստակ պիտի գողնայ . Տօքթօրը այս միջոցին քննութիւնը մէկ կողմ կը ձգէ քահանային կըսէ (կիթ շու ասքէրի թուծ) . մեր խելացի քահանան ալ կերթայ — զօրքը անմիջապէս (տէրտէր մի գար թէ չէ կպաննեմ) կըսէ . քահանան աս լսելուն պէս ետ կը դառնայ — ետքը տաճիկ Տօքթօրը կերթայ բրտնելու . անոր ալ նոյն պատասխանը կուտայ . բայց Տօքթօրը մտիկ չընելով կերթայ զօրքին քով . ու զօրքին քովը հասնելուն պէս զօրքը Տօքթօրին երեսին այնպէս ապսակ մը կը զարնէ որ Տօքթօրը կը գլորի գետին . վերջը քահանան եկեղեցեայ առջեւէն անցնող քանի մը հայ երիտասարդները կը կանչէ սղաքը ներս

գողնու . ալ աւելի կը ստատականար ու սուր կերպարանք կանոնը . եւ այսպիսով քանի մը ամիսներ . այդ երկու զօրքը ուժեր մէկգլմէկու զարնուելով . զայնպէս պաշտօնանկութեան վրայ կեղտականար . այդ անկման լուրը աւելի կատողեցուց պէլը . այլ եւս ինչ ընելն չէր գիտէր . գահանութիւնէն ինքզինք կորսնցուցած վրէժ . վրէժ կը գտար :

1883 թուականին . այդ գաղանը պաշտօնէն քառելով . իր վրէժը լուծելու համար ամիսներ աշխատեցաւ վատ հայերու միջնորդութեամբ հաշտութիւն մը կայացնել . այլ եւս ուրիշ հնար չէր մտայած . միմիայն ատորով էր որ պիտի կրնար իր փափաքին հասնիլ . այդ եւս իրեն համար անկարելի չէրու . քանի որ վատ հայու մտքը մէջը կը գտնուէր . երկարատեւ աշխատութենէն յետոյ . բերդի մէջ հացկերոյթի մը միջոցին երկու կողմէն հաշտութիւն տեղի ունեցաւ . եւ այդ հաշտութենէն մէկ ամիս յետոյ խնձորի մը մէջ գաղան պէյի հրամանաւ . մէկ մէկ գաւաթ

կը մտնեն մին զօրքը լու մը կը բռնէ մէկուն ալ լու մը կը կապէ . հիմա 2 երիտասարդները . տաճիկ Տօքթօրը եւ այդ վախկոտ քահանան չորս հոգի զօրքը այնպէս կը ծեծեն որ չեմ կըրնար նկարագրել — զրպանը կը նային 15 փարա կելէ — խեղճ զօրքը գողութիւն չընէ հապա ինչ ընէ — վերջը բոլորներ . քովէր հազարապետ մը խօշորով քանոնի զօրքերով կուգան զօրքը ծեծելով կանոնն կը տանին :

Վաղը զուրպան պայրամի է . տակաւին զօրքերուն մէկ փարա ամաւ կան չի կայ . Շատ կը վախնանք որ մտերս խոռվու թիւն մը չը հանէին : Աստուած բարին կատարէ :

Ս. Չ. Ե.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կիրակի օր ազգային վարժարանի մէջ տեղի ունեցաւ Որբախնամ բնկերութեան ընդհանուր ժողովը եւ քուէակուցութեամբ ընտրուեցաւ զորքի ժողովը որ կը բաղկանայ հետեւեալ անձնաւորութիւններէ .

- Պատ. Արքայապետ Ա. Մարտիրոսեան
- Տիր. Ստեփանուր Արքայապետ
- » Յովսէփ Բարսեմեան
- » Յարութիւն Ճանկիւրեան
- » Յակոբ Արքայապետ

— Ընտրուած ենք թոյնս Գնու. Չու. գայեցի Մանչեսթրի մէջ հարատարակած «Եկեղեցի Հայաստանի» անունով ամսական կրօնական հանդէսը :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊՈՒՐԿԱԶ ԵՒ ՌՈՒՍՈՒ

Նօվօ-Վրէժի միայն յարուցած Պուրկազի շարքը գոյցէ շատերուն հաւատք չէ ներշնչած . բայց մենք ժամանակին հաղորդեցինք Նոր քաղաքական հոսանքը որ սկսած է Պուրկարիոյ և Ռուսիոյ մէջ այսօր կը կարծուի որ երկու պետութիւններու մէջ կը քուած է գաղանի համաձայնութեան կէտէրը . որոյ հետեւանքն է Ռուսիոյ ֆինանսական նախարարի օգնա-

սուրծով թունաւորելով քանի մը օրէն յետոյ երկուքն ալ մեռան . ամբողջ կնուան սգոյ մէջ ձգելով :

Պուրկազը գաւառացի . Լիզ գիւղացի Լեւոն վարժապետեան . սա գաւառի վրայ ըլլալով թէ . առանց կրթութեան կարելի չէ մարդ մը ինքնաձանաչ ըլլալ . իր շահը պաշտպանել . եւ միանգամայն հանրային շահուն . եւս նպատակ . իր առաջին քայլը եղաւ իրենց գիւղի մէջ գաւառութեան պաշտօն ձեռք առնուլ . գիշեր ցորեկ աշխատելով . ինքնաձանաչ գաղափարականներ պատրաստելու . իր այդ անխոնջ աշխատութեամբ գնահատուեցաւ Միացեալ Բնկերութեան . եւ Պուրկազը գաւառի Միացեալ Բնկերութեան զբարոյ մէջ հայկարանութեան եւ պատմարանութեան ձեւերուն գաւառութեան ընտրուեցաւ :

Այնքան առաջ գնաց որ ամբողջ Պուրկազը գաւառի մէջ ժողովրդականութիւնը գրաւեց . այդ միջոցին անհրաժեշտ պարտք համարեց ներքին կազմակերպութիւններ հաստատել

կան Գոյէքոյի ժամանումը . շինարարական նախարար Բարբիքօօօի Բնկերակազմութեան մեկնումը և իշխանի վարազուրած բացակայութիւնը . այս ամենը հաստատելու համար մենք պուրկար զինուորական նախարարութեան օսկան համարուող «Թէլէկրաֆ» թերթին հետեւեալը կը քաղենք . սպայակոյտի զօրականն էր գրուած :

«Ըստ պատերազմական Ֆօն-Տէր կոյց բաշայէն ուրուող ծածկ ծրագրի Պուրկարիոյ դէմ պատերազմ պատահած դէպքին թուրք զլխաւոր բանակը պիտի յառաջ խաղայ թունճայի և Մարիցայի հողի մասերը . և հարաւարելան սահմանագրուի զիբք բռնած պուրկար բանակն ջախջախելէն յետոյ պիտի գրաւէ հարաւային Պուրկարիան ու Պալքանի անցքերը (Կիրճ) :

Թիւրք զլխաւոր բանակի շարժումները պիտի դիւրացնեն իրենց թեւարկութեամբը երկու զօրաբանակներ . մին Ալպանական զօրաբանակ . որի Ալքալէն (Մակեդոնիա) պիտի յառաջ խաղայ դէպի Բէօսթէնիոյ Սօֆիա և Սամաքով . իսկ միւս զօրաբանակը ցամաք պիտի իջնայ . զոր թուրք նաւատորմը պիտի փոխադրէ Պուրկազ և յառաջ պիտի ջակօրս . այսինքն հարաւարելու (Հարմանալի կողմը) սահմանը կեցած մեր զօրքերու քամակը մը ուրիշ բանակ ալ վառնա ցամաք պիտի ելլայ . իրեն նպատակ ունենալով Տէլի-Օրմանի հոծ թիւրք տարրը ապստամբեցնելու . Ուրման յայտնի է թէ Պուրկազը ինչ նշանակութիւն ունի մեզի համար թուրքիայի պատերազմ յայտարարած առեւնը . երբ մենք առանց դաշնակիցի ենք :

Թուրք նաւատորմը թէև տղար . սակայն մեր ուժերու հետ բազմաթիւ շատ զօրաւոր է . այնպէս որ Պուրկազի պաշտպանու-

թիւնը մէջ . քանի որ ինքը սիրուած էր ժողովրդէն . եւ ամէն տեղ իր ձայնը կրնար լսել ընել տալ . որով առանց յապաղման սկսաւ ձեռնարկել . եւ կարճ միջոցի մը մէջ գրեթէ ամբողջ Պուրկազը գիւղերը մէկգլմէկու կապեց իր ընկերներու անկախութեամբ . որն որ գիւղերու մէջ վարժապետութիւն կընէին . ասորնք եւս Սուրբ Կարապետի դպրոցէն ելած են :

Որքան որ մէկգլմէկու դէմ լարուած զրութիւններ կը վերնար . անոր տեղ թագաւորելով սէր եւ եղբայրասիրութիւն . այնքան ալ իրենց ներքին կապակցութիւնները օր ըստ օրէ առաջ կերթար . եւ հաստատուն ձեւերով մէկգլմէկու կը շղթայուէր . միմիակ խիստ զազոնապահութեան վրայ հիմնուած . խիստ եւ անաչառ ձեւով կը վարուէին դէպի անոնք . որոնք այդ գրական հիմունքը . իր կական նոյնութեամբ չըմբռնելով . երբեմն երբեմն կը սխալուէին գաղանի մը դուրս տալով :

Որքան որ այս յեղաշրջման փոփո-

թիւնը կամ ալ ամբողջ Սեւ-Մովի եզրերի պահպանութիւնը մեզի անհրաժեշտ պէտք կերեալ . Բայր ծովային նաւահանգիստները . ինչպէս նաեւ ծովեզրեայ մերձեայի ափերը երեք տարբեր միջոցներով կը պաշտպանուին :

Ա. Անշարժ պաշտպանողական եղանակ .

Նաւահանգստի անմիջական պահպանումը բոլորովին թողուած է . ծովի տակ զետեղուած գաղտնի ականներու ու միակեզրոն միջաներու ուժին . պաշտպանուած հոծ թնդանօթային զօրութեամբ . որոնք բեւեռուած են ծովափեայ մարկոտցներու վրայ :

Բ. Շարժուն պաշտպանողական եղանակ . ուժեղ նաւատորմի աջակցութեամբ թշնամոյն մարտահանգիստ դէմ հակադիր դիրք կը բռնէ զայն ցամաքը չը թողնելու որ զօրք թափէ կամալ ծովի բաց երեսը ըլլալով թշնամուոյս նաւատորմը կը փնտռէ :

Գ. Բարդ պաշտպանողական եղանակ . երկու զօրժամական միջոցներու բազաբուր թեւամբը վերջինը ռազմադիտութեան մէջ ամենաարագադիտ յեկատուած է . որովհետեւ հակառակ անյաջող ճակատամարտի . արձակ ծովի երեսը նաւատորմը ապաստարան կը գտնայ նաւահանգիստը . շարժուն պաշտպանութեան անմիջական ուժին ներքեւ :

Եթէ վերոյիշեալ ռազմային եղանակէն մըն Պուրկազի պաշտպանութեան համար գործ դնենք . Պուրկարիոյ համար պիտի նստի 20 միլ . Ֆրանքի . որովհետեւ պէտք պիտի ըլլայ մեծ ամրոցային թնդանօթներու երկաթեայ շինուածքներ զանոնք պահպանելու որոնք մեծ ծախսերու պէտք ունին :

Եթէ որոշում տանք Պուրկազը պաշտպանել ոչ միայն թուրք

խուժիւններ օր ըստ օրէ ոգևորուելով Մոյ գաւառներու մէջ կարծար ծուէր տուանց պղտիկ ընդդիմութեան մը իսկ հանդիպելու առաջ կերթար . իսկ միւս կողմէն կար մեծ պակասութիւն մը . եւ այդ պակասութեան վրայ ուղարկուելու մը զարձնող չէր գտնուէր . որ էր բաժանում . թէ ինչպէ՞ս . իւրաքանչիւր գաւառ ունէր իր որոշ քանի մը յօրուածներէ բաղկացեալ պայմանագրութիւն մը եւ ատոր գծած ուղիով կը շարժէր . իսկ ուրիշ մը բոլորովին տարբեր . հետեւաբար շատ պարզ է որ տարբեր եղանակաւ մը պիտի շարժէր . եւ այսպիսով Մուշ . կնուս եւ Պուրկազը տարբեր տարբեր ուղղութեամբ կընթանային :

ՄԱԿԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԻԱՆ

(Շարունակելի)

այլ նաեւ օտար մարտանաւերու յարձակումէն, անդին աճուցիչ պաշտպանողական ծրագիրը 50 միլ. ֆրանքի զուլա պլանի լայն, որովհետեւ շատ լուրջ ու խնամքով պէտք է ըլլայ, հակառակ պարագային ոչ մի նշանակաւ թիւն ու արժէք չունենար պաշտպանողական եղանակը ինքնին: Ասկից պլանի գտնանք այդ միջոցները մեր ներկայ ֆինանսական վիճակին մէջ: Պարկազը ռուսերուն յանձնուելուն հակառակողները խօսք ունին: Հիմա նայինք թէ ինչ նշանակութիւն ունի Պարկազը ռուսերուն համար, ռուս սեփական նաւաբաժինը զէպի Պոլիս յառաջ շարժուելու համար Թուրքիոյ զէմ պատերազմած պահուն իրեն անհրաժեշտ են Սեւ Մովրի ափերը մէկ կամ երկու յենարաններ, այս յենարանը ներկայ պարագայի մէջ այն կարեւորութիւնը ունի ծովային ռազմագիտական տեսակետով, ինչ որ նա ունի դաշտի մէջ ցամաքային բանակի համար:

Նաւատորմը որչափ որ հեռանայ իր յենարանէն՝ այնքան նա իր գոյութիւնը վտանգի կենթարկէ: Յենարանը նաւատորմին կը հայթայթէ ուտեստ, պաշար, ռազմամթերք և անուր, որոնք ամենապէտքականներն են. և զինարան մը, քիստուած նաւերը նորոգելու: Ռուսական նաւատորմը զէպի Պոլիս ռազմախաղած ժամանակը ընակահարսր ռուս Սեւ ծովեան եզերքը Օտեսան իրեն յենարան պիտի ընտրէ:

Շատ զիւրիւն է դատելը, մանաւանդ այն հանգամանքը որ ռուս նաւատորմի գրութիւնը, հեռու մօտաւոր յենարանէ մը և առանց միջակայ կայարաններէ ինչ վըտանգներու առջև է: Ահա ատոր համար ռուսերն կը պահանջեն Պարկազը իրեն Պոլսոյ ամենամօտ կայարան. այս հարցը արդէն գրասեղանի վրայ է և ռուսերուն համար կենսական է:

Եթէ պուլկար կարավարութիւնը կը մերժէ Պարկազի յանձնումը, մենք ոչ միայն կը զըրկուինք այն օգուտէն որ մեզ իբրեւ դաշնակից կառաջարկէ Ռուսիան, այլ նաեւ Թուրքիոյ զէմ ընդհարում ունեցած ժամանակներս նա մեզմէն բռնութեամբ պիտի խլէ և առանց պայմանի (ինչպէս որ վերջը յիշեցինք նա առանց այս նաւահանգստի չպիտի կրնայ գոյծել): Իսկ եթէ զայն Ռուսիային յանձնենք բաւին բուն նշանակութեամբ, այն ատեն մենք պիտի օգտուինք: Այս հարցը կուսակցական հայեացքով քննուելով կուսակցութիւններէն, վախճանը այն պիտի ըլլայ որ մեր դաշնակիցը գուցէ պայտի:

Վերոյիշեալէն այն եզրակացութեան կուգանք թէ երբ քաղաքական հանգամանքներու բերմամբ պէտք ունինք մի զօրեզ

դաշնակցի և Ռուսիա կը համաձայնի, մեր շահերուն օգտակար է որ իր նաւատորմը Պոլսոյ վրայ յառաջխաղած ժամանակը, իբրեւ զինակից մեր Սեւ ծովեան ափերն ալ հսկէ: Այնպէս որ մենք պուլկարներն ալ բարոյապէս պարտաւորած ենք Ռուսական նաւատորմի գործը զիւրացնել, իրեն թողլով Պարկազը իրեն յենարան, հեռուաբար մեր շարժուն պաշտպանողական եղանակը Ռուսական նաւատորմը պիտի ստանձնէ ամբողջով Պարկազի մէջ:

Իսկ ինչ որ կը վերաբերի Պարկազի կայուն պաշտպանողական միջոցներուն՝ զայն պիտի կատարէ պուլկար զօրքը մեր ազգային զգացումները շարատարելու համար:

Նման պաշտպանութիւն մը կարի հարկաւոր է որ Ռուսական մարտանաւերը կարողանան պատու պարուել անյաջողութիւններէն ու ձախողութիւններէն, որոնք կրնան ենթադրուիլ միայն այն ատեն, երբ Թուրքիային Եւրոպական նաւատորմը օդնութեան հասնի, ինչպէս Անգլիականը: Ամեն պարագայի մէջ նաւատորմի յենարանը պէտք է ամբողջութիւն հարկէ ամբողջութեան համար հազարն ծախսերը ռուսերու հաշույն պիտի ըլլայ, և այսպէս Պարկազի նաւահանգիստը պէտք է յանձնուի ռուսերուն վերոյիշեալ պայմաններու հիման վրայ: Տեղն է յիշելու մեր Պուլկարական սառը «խթանին» զէմ աքացի չեն տար և «երկու չարեաց» փոքրագոյնը:

Սօֆիա
Ն.Ս.Մ.Ա.Կ.Ա.Տ.Ո.Ւ.Փ
«Շարժումի» ներկայ թիւով յաւելուած մը ունինք. Տիար Յ. Ս. Փափաղեանին պատասխանը «Իրազեկի» յօդուածին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մօտերս վախճանած է Անգլիական թերթերու նշանաւոր թղթակիցներէն մին Արչիպալա Պօրպո: Այս թղթակցը հռչակաւոր է անորմով ներկայ եղած է բոլոր պատերազմներուն և արագ ու մանրամասն տեղեկութիւններ տուած իր աշխատակցած թերթերուն: Ան եղած է Սպանիա, Ասիանիտան Պուլկարիա միշտ պատերազմներու ժամանակ և իր թղթակցութիւնները շուտով հասցնելու համար ամէն վտանգ և դժուարութիւններ յանձն առած է: Տասը տարիէ ի վեր շէր կրնար իր գործը շարունակել, որովհետեւ այդքան դժուարին ճամբորդութիւններ խիտ ազդած էին իրեն վրայ:

— Թէ հրանի տաճիկ դեպքանը

չառ կաշխատի ճահը համոզել որ Փարիզ պայցած ժամանակ Սուլթանին այցելէ:

Այդ նպատակին համար թուրքերը շատ նուէրներ բրած են պարսիկ հոգեւորականներուն: Ճահի Սուլթանին այցելելը մահամեականներու համար մեծ նշանակութիւն մը ունի:

— Կրտսեց Ժօզէֆ ապրիլ 2ին պիտի երթար Պարիզ: Պարիզի լրագրութիւնը կողջունէ այդ այցելութիւնը և կընդունի իբր նոր գրաւակուն մը երբեակ դաշնակցութիւն յարատեւութեան և Աւստրիոյ ու Գերմանիոյ սրտակից բարեկամութեան:

— Փէնէրալ Բօպէրտս մարտ 28ին կը հեռագրէ թէ վերջերս պօէրները շատ գործունեայ դարձած են:

Ի հարկէ գործունեայ են, երբ կրկին սկսան անգլիացիները նեղել:

— Պելճիբայի նախարարը ազգային ժողովին յայտարարած է որ թաղաւորը իր բոլոր անշարժ կայքը նուիրած է երկրին:

— Եւրոպական մամուլի մէջ սկսած են երեւնալ յօդուածներ որ կը ջրեն Ռուսիոյ մասին Պալքանեսան երկիրներու վերաբերեալ տարածուած լուրերը և ենթադրութիւնները, որով և Պուլկարական «Թէլեկրաֆ» թերթի մէջ գրուած յօդուածը Ռուս Պուլկարական դաշնակցութեան և Պարկազը յանձնելու մասին, իր նշանակութիւնը կը կորսնցունէ: Ռուսիա հաւատարիմ պիտի մնայ 1897ին Աւստրիոյ հետ ունեցած պայմանագրութեան:

— Ի՞նչոյ՞ թէր զործակալութիւնը կը տեղեկանայ թէ Թրանսիլվիա երկու հասարակագետութիւնները Բօրթոկալիոյ կառավարութեան յայտարարած են որ Անգլիացի զօրքերուն Բօրթոկալիոյ հոգեբէն անցնելու թոյլատուութիւնը իբր թշնամանք կընդունին:

Չի կարծուի որ թրանսիլվիացիք պատերազմի սկսին Բօրթոկալիոյ դէմ, բայց եթէ այսպէս ըլլայ անգլիացիները պիտի պաշտպանեն:

— Հնդկաստանի ֆապար նահանգի մէջ խռովութիւններ սկսած են:

— Փարիզին Պալքանեսան կը հեռագրեն թէ Լուպլ շրջապատուած է նախարարներէն, բացի Գալիֆէ, որ լուրջ կերպով հիւանդ է, բացած է ցուցահանդէսը:

Կաճառականութեան նախարար Լուպլն ընդունած է ճառով մը, որուն մէջ բրած է ժողովուրդներու շահակցութիւնը աշխատանքի և գիտութեան շրջանակներու մէջ կղզացնէ թէ պիտի գայ որ մը որ մարդկութիւնը պիտի գիտնայ մրցիլ միմիայն խաղաղութեան և աշխատանքի փոստար կուրին մէջ, ժողովուրդը եռանդով ծափահարած է: Փարիզը շատ կենդանի վիճակ մը ստացիր է: Ամբողջութիւնը դրօշակներով է զարդարուած:

